

դության մեջ պահել առարկաների իրական և սիմվոլիկ նշանակությունները և մասնատել օբյեկտի իմաստը, որպեսզի այն կարողանա ծեռք բերել երևակայական որակներ:

Այսպիսով մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նախադպրոցականները առարկաները սիմվոլիկ ձևով պատկերում են տեսողական-տարածական ձևի մեջ: Մինչդեռ սիմվոլիզմի խախտումը մանկական նկարներում սերտորեն կապված է խոսքի և սոցիալական հարաբերությունների զարգացման խախտման հետ:

Նախադպրոցականների մոտ իրականության պատկերման այս ձևերը նպաստում են նրանց հոգեբանական զարգացմանը նախ նրանով, որ երեխան հնարավորություն է ունենում օբյեկտները պատկերել սիմվոլիկ ձևով, և երկրորդը, որ կարողանում է ընտրել պատկերման այնպիսի պարզ ձևեր, որոնք համապատասխանում են առարկայի նշանակությանը:

ՀԱՏՈՒԿ ԳՊՐՈՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Կոլոտյան, Երեւանի թիվ 11 գիշերօթիկ դպրոցի հոգեբան

Մարդը, լինելով սոցիալական էակ, իր վրա է կրում տվյալ սոցիալական միջավայրի դրոշմը: Ինչպիսի՞ դրոշմ կկրի երեխան, որը մեծանում է մանկատանը, գիշերօթիկ դպրոցում և նմանատիպ այլ հաստատություններում: Ինչպե՞ս կընթանա անձի զարգացումը այդպիսի հաստատություններում: Չէ՞ որ այդ հաստատություններում կողք կողքի ապրում ու մեծանում են նույն «պիտակը» կրող, բայց բոլորովին տարբեր ճակատագիր ունեցող երեխաներ:

Մանկություն... Հատուն տարիքում հաճախ են հիշում այս բառը. այդ մի բառն իր մեջ այնքան շատ խորհրդավորություն է պարունակում: Ոմանք դա արտասանում են մեծ խնդրությամբ, իսկ ոմանք գերադասում են նույնիսկ չհիշել:

Մարդու կյանքի հետագա զարգացման ընթացքը մեծապես կախված է այն բանից, թե ինչպես են ընթացել նրա կյանքի առաջին տարիները: Մանկության վրա է խարսխվում անձի հետագա զարգացումը: Երբ մարդիկ մեծանում են նրանք ավելի հաճախ ու վառ են հիշում իրենց մանկությունը: Ամենար է մանկությունը պատկերացնել առանց ծնողների և մանավանդ առանց մոր: Իսկ եթե ծնողները չկա՞ն, կան կան, բայց երեխան ընտանիքում չէ դաստիարակվում, ի՞նչ է կատարվում երխայի հոգում, ինչպե՞ս է դա արտացոլվում երեխայի հոգեկան կյանքում:

Մայրական դեպրիվացիայի մասին խոսել են շատ հոգեբաններ: Նրանք պնդում են, որ երեխայի լիարժեք զարգացման համար անհրաժեշտ է, որ նա կյանքի առաջին իսկ օրերից շրջապատված լինի հոգատարությամբ, ուշադրությամբ, փաղաքշանքով:

«Սիրո անսահման պահանջմունք»՝ սա ըստ Լ. Տոլստոյի երեխաների տարբերակիչ գիծն է, և դժվար չէ պատկերացնել, թե երեխաներին ինչ տանջանքների և ապրումների կարող է հասցնել այդ սիրո բացակայությունը: Դժվար թե դա անհետևանք անցնի: Ամեն ինչ մոռացվում է, բայց ոչ երբեք մանկությունը.

իհարկե, մարդու կյանքում կարելու է ցանկացած փուլ, բայց հատկապես կարելու է մանկությունը: Այդ առիթով Լ. Տոլստոյը գրել է. « Հինգ տարեկան երեխայից մինչև ես մեկ քայլ է, իսկ նորածնից մինչև հինգ տարեկանը՝ ահավոր տարածություն»: Վաղ ժամանակներից հայտնի է եղել, թե որքան կարելու է մոր և մանկան միջև եղած կապը: Սրանից էլ կախված է մարդու խառնվածքի, բնավորության, զգացմունքային ոլորտի ձևավորումը:

Վաղ հուզական կապերի նշանակությունը մոր և մանկան միջև երևում է երեխայի վախի և ճանաչողական ակտիվության զարգացման ընթացքում:

Ամերիկյան գիտնականները գտնում են, որ կենդանի արարածի առաջին զգացմունքը սերն է դեպի մայրը, եւ երեխայի լիարժեք զարգացումը կարող է գոյություն ունենալ միայն մոր հետ ջերմ եւ սերտ հաղորդակցման ընթացքում:

Այո, ցանկացած երեխայի համար ուղղակի երջանկություն է լինել մոր գրկում, զգալ մայրական ջերմությունը, մայրական կաթի համը, որը կարելի է ասել, որ բացակայում է հատուկ կրթական հաստատությունների երեխաների մոտ: Այս ջերմության պակասի լրացումով կարելի է բացատրել այն երեւույթը, որ հատուկ կրթական հաստատությունների երեխաները բառատրել այն երեւույթը, որ հատուկ կրթական կամեցող մեծահասակին:

Այդ հաստատությունների երեխաները զգում են իրենց կախվածությունը իրենց անմիջականորեն շրջապատող մարդկանցից, պարտավոր են հաշվի առնել այն պահանջները, որոնք ներկայացնում են իրենց վարքին, քանի որ դա իրականում որոշում է իրենց խնդիրները, անձնական հարաբերությունները:

Ընտանիքում երեխաները քիչ են, իսկ հաստատություններում՝ մի խմբում 15-20 երեխա: Այդ պատճառով էլ դաստիարակի համար հաճախ դժվար է ստեղծել անձնական էնոցիոնալ կապեր: Իսկ դա բերում է երեխայի մոտ հոգեկան եւ ֆիզիկական զարգացման խիստ խանգարումների: Մորից կախված է ոչ միայն խնամքը, հոգեկանի նորմալ զարգացումը, այլև ընտանիքի ստեղծումը: Այդ է պատճառը, որ հաստատության երեխաները չեն կարողանում նկարել «ընտանիք», պարզապես չեն հասկանում բառի իմաստը՝ ասոցացնելով դպրոցի, դասարանի հետ: Մայրը, որը լքել է երեխաներին մանկությունից, մատնել է անտարբերության, այդ երեխաների համար պարզապես մի սրբություն է, որին նրանք հիշում են խոր ակնածանքով եւ երախտագիտությամբ:

30 ԲՈՂՊԵԱՆՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ - ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՈԱԴԻԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Ռ. Հայրապետյան, ԵՊՀ Փիլ. սոց. և հոգեբանության բաժնի ՈւԳԸ նախագահ, մագիստրանտ

Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ ռադիոժրագրերի միջոցով երաժշտական և ինֆորմացիոն նյութի փոխանցումը ունկնդրին հոգեբնության մեջ դասվում է միջնորդավորված հաղորդակցության ձևերին: Միջնորդավորված հաղորդակցության, ինչպես նաև «մեդիատորի» (այս պարագայում՝ ռադիոն) արդյունավետ օգ-

տագործումից և ծրագրերի կառուցման հոգեբանական պայմանների և պահանջների գրագետ պահպանումից է կախված լայն լսարանի ապահովումը: Միջնորդավորված հաղորդակցման ժամանակ «մեդիատորի» առկայությունը հնարավորություն է տալիս դադարեցնել ինֆորմացիայի հոսքը: Այլ կերպ ասած կախված տարբեր պատճառներից (ինֆորմացիայի ոչ գրագետ կառուցում և մատուցում, վտանգավոր դրդում և այլն) ունկնդիրը կարող է ազատորեն անջատել ռադիոընդունիչը կամ պարզապես փոխել հաճախականությունը: Մեր իրականությունում FM ռադիոկայանները այս խնդիրն լուծում գտնելու համար ընտրել են հետադարձ կապի միջոցով ռեցիպիենտի (Sbm) վրա ծրագրի թողած էֆֆեկտի (Մո) զնահատման ճանապարհը: Սա անշուշտ ունի իր թերությունները, և արտասահմանյան ռադիոկայանները, համագործակցելով հոգեբանների հետ, մշակում են կոնկրետ ծրագրերի կառուցման հոգեբանական օրինաչափություններ: Մեր հանրապետությունում այս ոլորտում դեռևս չկան լուրջ հոգեբանական հետազոտություններ: Այդ բացը լրացնելու նպատակով ընտրեցինք 30 րոպեանոց երաժշտական ռադիոծրագիրը որպես ռադիոծրագրերի ամենատարածված տարատեսակ: Մեր ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում.

- ❖ հաղորդակցման ռեցիպիենտները հաղորդակցման ողջ ընթացքում
- ❖ հաղորդակցման կազմակերպման միջոցները

Լրատվամիջոցներին ներկայացվող ամենաեական պահանջը նյութի բովանդակության մեջ ինքնաճանաչողությունն է. մարդիկ ցանկանում են մատուցվող իրողության պատկերներում տեսնել իրենց, իրենց գաղափարները, իրենց ապրելակերպը: Այսինքն ցանկացած ծրագիր և ռադիոկայան պետք է ուղղված լինի կոնկրետ լսարանի: Քանի որ ցանկացած ծրագիր ունի նաև գաղափարակազմիչ ֆունկցիա, ապա ծրագրի հեղինակի կարևորագույն խնդիրներից մեկը ծրագրի հիմնական առանցքի, ուղղվածության ճշգրտումն է և ծրագրի ողջ գոյության ընթացքում այդ առանցքին հավատարիմ մնալն է: Առանցքից ցանկացած շեղում ռեցիպիենտի վարքում բերում է անցանկալի փոփոխությունների՝ կապված անվատահույսության, անորոշության, հոգեբանական դիսկոմֆորտի գործոնների հետ:

Ռեցիպիենտի և լսարանի ուսումնասիրումը ի հայտ է բերում մյուս օրինաչափությունը: Դա հասկացման խնդիրն է, այսինքն հաղորդագրության ընդգրկումը ռեցիպիենտի անձնական փորձի մեջ: Մեր օրերում ՁԼՄ-ներում՝ հատկապես ռադիոյում, նկատվում է հաղորդավարից հեռացում և շարժ դեպի հեղինակ-հաղորդավարությունը: Սա արդեն լրագրողների կողմից ևս մեկ հոգեբանական օրինաչափություն գրագետ օգտագործման հետևանք է, քանի որ հեղինակը, ավելի լավատեղյակ լինելով նյութին, կարող է եթերում կողմնակի բացատրություններով, մեկնաբանություններով ավելի մատչելի դարձնել նյութը՝ ի տարբերություն հաղորդավարի (դիկտորի), որը միայն ներկայացնում է գրվածը: Ինֆորմացիոն-երաժշտական ժամանցային ծրագրերը հանրապետական ռադիոկայանի ամենամրցունակ արտադրանքն են: Ըստ ստացված տվյալների ամենամեծ արդյունավետությամբ օժտված են երաժշտական և ինֆորմացիոն բաղադրամասերի փոխլրացման սկզբունքով կառուցված ծրագրերը: Ունկնդիրը, փաստորեն, երաժշտական համարների ընթացքում չի կտրվում նյութից և, ի հակառակ, ավելի է հետաքրքրվում հաջորդ ինֆորմացիոն մասով: 30 րոպեանոց ռադիոծրագրի առավել արդյունավետ սխեման, ըստ ստացված տվյալների, հետևյալն է.

ԵՅ – ՈՒ – ԵՅ – ԻՄ – ԵՅ – ԻՄ – ԵՅ – ԻՄ – ԵՅ – ՅՆ – ԵՅ
ԵՅ – Երաժշտական համար
ՈՒ – Ողջույնի խոսք
ԻՄ – Ինֆորմացիոն մաս
ՅՆ – Հրաժեշտի խոսք

Այս համակարգում ապահովվում է խոսք – երաժշտություն 1:2 հարաբերությունը: Փաստորեն ինֆորմացիոն մասերը և անընդհատ խոսքը տևում են 3ր-ից ոչ ավել, քանի որ ըստ տվյալների մշակած ժամանակից երկար խոսքը բերում է հոգնածության և որոշ դեպքերում նույնիսկ ծանծույթի:

Ողջույնի խոսքը կառուցվում է որպես ծրագրի ներածական և նախապատրաստում ռադիոլսողին առաջիկա ինֆորմացիոն մասերին: Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ ծրագրի սուր և հետաքրքիր մասերից բաղկացածների ընդգրկումը ողջույնի խոսքի մեջ կտրուկ բարձրացնում է արդյունավետությունը: Ազդեցության ավելի մեծ արդյունավետությամբ են օժտված այն երաժշտական-ինֆորմացիոն ծրագրերը, որոնցում երաժշտական համարները ընտրված են ինֆորմացիոն մասերին համապատասխան:

Ցանկացած երաժշտական համար բաղկացած է երեք մասից՝ երաժշտական ներածություն (Intro), բուն համար և երաժշտական ելքից (Outro): Փորձերը ցույց են տալիս, որ երաժշտական ներածությունը ունկնդրի մեջ առաջ է բերում սպասման ալիք, որը հագեցնում է ծրագրից հեռացման: Նույն պատկերն է նաև երաժշտական ելքի դեպքում: Ունկնդիրների հոգեբանական հետազոտությունները հանգեցնում են նրան, որ խորհուրդ է տրվում ինֆորմացիոն մասից անմիջապես հետո միացնել բուն համարը՝ հանելով Intro-ն, իսկ բուն համարի ավարտից հետո, երաժշտական ելքի ներքո՝ հնչեցնել հաջորդ ինֆորմացիոն մասին կապող խոսքը:

Վերջում կցանկանայինք անրադառնալ երաժշտական-ինֆորմացիոն ծրագրի մեկ այլ բաղադրիչի, այն է՝ երաժշտական ֆոնը: Ցանկացած ծրագիր և եթերային խոսք կառուցվում է երաժշտական ֆոնի վրա. այն թույլ է տալիս ծածկել ձայնի թերությունները, լցնել խոսքերի միջև ընկած դատարկությունը, ստեղծել ծրագրի համապատասխան տրամադրություն: Վերջապես, ամենակարևոր հոգեբանական օրինաչափությունը, որը թույլ է տալիս ունկնդրին ճանաչել ծրագիրը: Փորձերը ցույց են տալիս, որ բազում ունկնդիրների մոտ հատկապես տպավորվում է իրենց սիրելի ծրագրի հենց ֆոնը: Դրա համար խորհուրդ է տրվում շատ մանրակրկիտ մոտենալ երաժշտական ֆոնի ընտրությանը: Այն ընտրել ըստ ծրագրի հիմնական ուղղվածության և տրամադրվածության, խուսափել որպես ծրագրի ֆոն երգեր օգտագործելուց և ֆոնը փոխել շատ հազվադեպ՝ միայն ծայրահեղ պարագաներում:

Սրանք են այն հիմնական օրինաչափությունները, որոնց կցանկանայինք անրադառնալ այս զեկուցման սահմաններում: Անհրաժեշտ է միայն մշել, որ ռադիոծրագրերի ամեն տարատեսակ ունի իր նրբություններն ու կառուցման հոգեբանական օրինաչափությունները: Ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել օր օրի փոփոխվող ռադիոընդունելի և ունկնդիրների պահանջները դեպի այս ոլորտը: